

ԱՌԱՆՑ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԱՅԳԻ

«Այստեղ առաջին անգամ հայրդ ինձ համբուրեց»,- Միրահարների զբոսայգու ցանկապատերից դուրս կանգնած մի կին ժպիտով պատմում էր դստերը: Միրահարների այգին համապատասխանում էր իր անվանն անգամ տասնյակ տարիներ առաջ, երբ կրում էր Պուշկինի անունը:



Մոտ մեկուկես տարի տեւած աշխատանքներից հետո երեկ վերաբացվեց «Պողոսյան» հիմնադրամի միջոցներով նորոգված 1.6 հա տարածք զբաղեցնող Միրահարների այգին: Հետաքրքիր էր զբոսայգում հայտնվածների առաջին տպավորությունը: «Էս ի՞նչ ա, հենց ծառե՞ր են, ոչ մի բան չկա՞», - հարցնում էր միջին կարգի մի չինովնիկ կողքին կանգնած նույն կարգի բիզնեսմենին: Վերջինս էլ իբրև կատակեց՝ «ոչինչ, հեսա մի քանի ամսից մի քանի լավ օբյեկտներ կլինեն»: Մպառնալիքի նման հնչած այս կատակն այնքան մոտ է մեր իրականությանը, որ առաջին բանը, ինչ ցանկանում էի անել զբոսայգու բացման ժամանակ՝ մոտենալ Երեւանի քաղաքապետին եւ հարցնել՝ «ի՞նչ երաշխիքներ կան, որ որոշ ժամանակ անց Միրահարների այգին էլ չի արժանանա Երեւանի մյուս կանաչ տարածքների ճակատագրին եւ չի վերածվի սրճարանների անընդհատ շղթայի»: Սակայն, ինչպես այգու բացմանը ներկա նախագահ Սերժ Սարգսյանին, այնպես էլ նրան ուղեկցող քաղաքապետին հարցեր տալու հնարավորություն լրագրողներին չտրվեց: Փոխարենը, «Պողոսյան» հիմնադրամի կողմից ծրագրի համակարգող ճարտարապետ Սարհատ Պետրոսյանը հայտնեց, որ առաջիկա 21 տարիներին զբոսայգու պահպանումն ու շահագործումն իրականացնելու է «Պողոսյան» հիմնադրամը: Դա ինչ-որ չափով հույս է տալիս, որ այգին գոնե այդ տարիներին կմնա այն տեսքով, ինչ կա՝ ծառեր, ծաղիկներ, արհեստական ջրվեժներ ու լճակներ, խնամված քարեր, փայտե նստարաններ, գեղեցիկ լուսավորություն եւ նախատեսվող մանկական խաղահրապարակ ու փոքրիկ մանկական սրճարան: Թե ինչ կլինի դրանից հետո՝ պարզ չէ:

Այգու բարեկարգման աշխատանքներն իրականացվել են շվեյցարաբնակ լանդշաֆտային ճարտարապետ Պիեռ Ռամբախի նախագծով, ով արեւելյան պարտեզների վերաբերյալ բազմաթիվ աշխատությունների հեղինակ է եւ երկար տարիների փորձ ունի պուրակների նախագծման ոլորտում: Այգու նորոգումն արժեցել է \$1 մլն 300 հազար: Ճիշտ է, այգին սիրահարներինն է, բայց չեն մոռացվել ծերերն ու մանուկները. այգում կան հարմարավետ անկյուններ, որտեղ կարելի է նարդի ու շախմատ խաղալ, իսկ մանկական խաղահրապարակը պատրաստ կլինի հաջորդ տարի: Չեն մոռացվել նաեւ էական մանրուքներ՝ աստիճանների եւ կտրուկ անցումների բացակայությունը այգին հարմարավետ վայր է դարձնում սայլակներով տեղաշարժվող այցելուների համար, գործում է նաեւ հասարակական գուգարան: Ծնորհիվ գիշերային դեկորատիվ լուսավորության՝ զբոսայգին հարմար է նաեւ երեկոյան զբոսանքների համար:

Այգու բացումը կատարեց Ալբեր Պողոսյանը, որն իր խոսքում նշեց, թե կառուցելով այս այգին՝ պատկերացրել է, որ այն կդառնա «մի վայր, ուր երեւանցիները եւ Երեւանի այցելուները կարող են պարզապես լավ ժամանակ անցկացնել: Հույս ունեմ, որ այս այգին կդառնա ավելին, քան զուտ զբոսայգի. կդառնա կլոր տարին կյանքով լի մի վայր, որտեղ ամենատարբեր արվեստագետներ, երաժիշտներ, քանդակագործներ, նկարիչներ կներկայացնեն իրենց ստեղծագործությունները բացօթյա ամֆիթատրոնում կամ կցուցադրեն իրենց արվեստը բնատեսարանի միջոցով: Նույնիսկ ձմռանը, երբ ամեն ինչ սառցակալած է, ես երեւակայում եմ լույսերի եւ տարատեսակ ձեւերի մի

փառատոն, որ դուրս գալով այգու խորքից՝ կյանքով է լցնում ձյունապատ ձմեռը: Ձեզանից ոմանց կարող է թվալ, որ այս նախագիծը ավելորդ վատնում է եւ կամ չի հանդիսանում առաջնային անհրաժեշտություն: Մեր ընտանեկան հիմնադրամում եղբորս հետ այս նախագիծը քննարկելիս մենք նույնպես կանգնեցինք այս խնդրի առջեւ, քանի որ, հաշվի առնելով նաեւ մեր ներգրավվածությունը մարդասիրական ոլորտներում, այս նախագծի իրագործումը պետք է կատարվեր ի հաշիվ մյուս նախագծերի: Սակայն վերջ ի վերջո մենք որոշեցինք շարունակել եւ իրագործել այն, գտնելով, որ երկրի համար նույնքան կարեւոր է շրջակա միջավայրի պահպանության եւ Երեւանի վերջին հանրային կանաչ տարածքը պահպանելու առումով նախադեպի ստեղծումը»:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ